ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի նախագահ Վարդան Հարությունյանի՝ Ղազախստանի Հանրապետություն կատարած այցի արդյունքների մասին

1. Անունը, ազգանունը՝

Վարդան Հարությունյան

2. Զբաղեցրած պաշտոնը՝

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի նախագահ

3. Գործուղման վայրը և ժամկետները՝

Քաղաք Ալմաթի, Ղազախստանի Հանրապետություն, 2017թ. հունիսի 21-23-ը,

4. Հրավիրող կողմը՝

Ռուսաստանի Դաշնության դաշնային մաքսային ծառայության ղեկավար - Մաքսային միության անդամ պետությունների մաքսային ծառայությունների միավորված կոլեգիայի նախագահ՝ Վ.Ի. Բուլավին:

5. Գործուղման նպատակը /աշխատանքային որ խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը/՝

Մասնակցություն Մաքսային միության անդամ պետությունների մաքսային ծառայությունների միավորված կոլեգիայի 23-րդ նիստին:

6. Քննարկված թեմաները՝

Մաքսային միության անդամ պետությունների մաքսային ծառայությունների միավորված կոլեգիայի 23-րդ նիստի ընթացքում ընդունվել են թվով 25 որոշումներ:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Իրականացվել են երկկողմ հանդիպումներ ԵՏՄ անդամ պետությունների մաքսային ծառայությունների ղեկավարների հետ, քննարկվել են երկկողմ հետաքրքրություն ներկայացնող մի շարք հարցեր: Նիստի ավարտին ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահ Վ.Հարությունյանը և նախագահի առաջին տեղակալ Ս.Ավետիքյանը պարգևատրվեցին Ղազախստանի Հանրապետության մաքսային ծառայության ստեղծման 25 ամյակին նվիրված հոբելյանական մեդալներով:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

Նիստի ընթացքում ընդունվեցին թվով 25 որոշումներ, որոնք վերաբերում էին մասնավորապես ԵՏՄ արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկին համապատասխան որոշակի ապրանքների դասակարգմանը և հայտարարագրման առանձնահատկություններին, ԵՏՄ տարածք առանձին տեսակների ապրանքների ներմուծման ժամանակ մաքսատուրքերի վճարումից ազատման կիրառման կարգին, մարդասիրական օգնություն համարվող ապրանքների նկատմամբ մաքսային գործառնությունների և մաքսային հսկողության իրականացման կարգի օպտիմալացմանը: Նիստի ընթացքում ընդունվեցին որոշումներ նաև ԵՏՄ ինտեգրված տեղեկատվական համակարգի հիման վրա մաքսային ոլորտում առաջնահերթ ընդհանուր գործընթացներին միանալու, ինչպես նաև ԵՏՄ տարածք(ից) ավտոտրանսպորտային միջոցների ժամանակավոր ներմուծման և արտահանման հաշվառումը և հսկողությունը ապահովող տեղեկատվական փոխգործակցության վերաբերյալ:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները՝

Մաքսային ծառայությունների ղեկավարների որոշմամբ Միավորված կոլեգիայի հաջորդ 24-րդ նիստը կանցկացվի ք. Երևանում, 2017 թվականի սեպտեմբեր ամսին:

10. Գործուղվողը՝

Վարդան Հարությունյան

11. Ստորագրությունը, ամսաթիվը՝

26.06.2017թ.